

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈԼԵԳԻԱՅԻ

ՈՐՈՇՈՒՄ

14.11.2012

2012 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 214

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՔՍԱՅԻՆ ԱՐԺԵՔԸ ՈՐՈՇԵԼԻՍ ՀԱՆՄԱՆ ՄԵԹՈԴԻ (ՄԵԹՈԴ 4) ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Մաքսային միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքը որոշելու մասին» 2008 թվականի հունվարի 25-ի համաձայնագրի 1-ին հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան որոշեց.

1. Հաստատել կից ներկայացված «Ապրանքների մաքսային արժեքը որոշելիս հանման մեթոդի (մեթոդ 4) կիրառության կանոնները»:

2. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից՝ 30 օրացուցային օրը լրանալուց հետո:

Նախագահ՝

Վ. Բ. Խրիստենկո

ՀԱՍՏԱՏՎԵԼ ԵՆ

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի

կոլեգիայի 2012 թվականի նոյեմբերի 13-ի

թիվ 214 որոշմամբ

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՔՍԱՅԻՆ ԱՐԺԵՔԸ ՈՐՈՇԵԼԻՍ ՀԱՆՄԱՆ ՄԵԹՈԴԻ

(ՄԵԹՈԴ 4) ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

1. Սույն Կանոններն օգտագործվում են 2008 թվականի հունվարի 25-ի «Մաքսային միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքը որոշելու մասին» համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) 8-րդ հոդվածով սահմանված հանման մեթոդի (մեթոդ 4) կիրառության դեպքում:

2. Սույն Կանոնները մշակվել են Համաձայնագրի, 1994 թվականի «Սակագների եւ առետորի գլխավոր համաձայնագրի VII հոդվածի կիրառման մասին» համաձայնագրի դրույթների, այդ թվում՝ դրան կից բացատրական նշումների, ինչպես նաեւ Համաշխարհային մաքսային կազմակերպության մաքսային գնահատման տեխնիկական կոմիտեի նյութերի հիման վրա՝ 4-րդ մեթոդի միասնական կիրառությունն ապահովելու նպատակով:

3. 4-րդ մեթոդը կիրառվում է այն դեպքում, երբ Մաքսային միության միասնական մաքսային տարածք (այսուհետ՝ Մաքսային միության մաքսային տարածք) ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը հնարավոր չէ որոշել Համաձայնագրի 4-րդ, 6-րդ եւ 7-րդ հոդվածների համաձայն:

Գնահատվող (ներմուծվող) ապրանքների մաքսային արժեքը որոշվում է 4-րդ մեթոդով այն դեպքում, երբ գնահատվող (ներմուծվող) կամ նույնական կամ համանման ապրանքները Մաքսային միության մաքսային տարածքում

վաճառվում են միեւնույն վիճակում, ինչ վիճակում դրանք ներմուծվել են այդ տարածք: Այդպիսի վաճառքների բացակայության դեպքում հայտարարատուի (մաքսային ներկայացուցչի) դիմումի հիման վրա Համաձայնագրի 8-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն դիտարկվում են վերամշակված (մշակված) գնահատվող (ներմուծվող) ապրանքների վաճառքները՝ բացառությամբ Համաձայնագրի 8-րդ հոդվածի 5-րդ կետում նշված դեպքերի:

4. Մաքսային արժեքը 4-րդ մեթոդով որոշելու նպատակներով ապրանքները կարող են համարվել միեւնույն վիճակում գտնվող, ինչ վիճակում դրանք ներմուծվել են Մաքսային միության մաքսային տարածք, այդ թվում նաեւ այն դեպքերում, երբ դրանք ենթարկվել են հետեւյալ փոփոխություններին՝

չորացում,

թափում,

բնական գոլորշիացում (հեղուկների համար),

մի փոքր ժանգի առաջացում,

ապրանքների հատկանիշների վրա չանդրադարձող, դրանց արժեքի վրա ազդող աննշան վնասվածքների առաջացում:

Ապրանքները նաեւ համարվում են միեւնույն վիճակում գտնվող, ինչ վիճակում ներմուծվել են Մաքսային միության մաքսային տարածք, եթե Մաքսային միության ներքին շուկայում վաճառքից առաջ դրանք ենթարկվել են փաթեթավորման նյութերի եւ (կամ) կոնսերվանտների հեռացման գործողություններին:

5. Գնահատվող (ներմուծվող) ապրանքների մաքսային արժեքը որոշելու համար հիմք է ընդունվում ապրանքի միավորի այն գինը, որով գնահատվող (ներմուծվող) կամ նույնական կամ համանման ապրանքների համախառն ամենամեծ քանակը վաճառվում է այն անձանց, որոնք փոխկապակցված չեն գնահատվող (ներմուծվող) ապրանքների՝ Մաքսային միության մաքսային

սահմանը հատելու հետ միեւնոյն կամ դրան համապատասխան ժամանակահատվածում Մաքսային միության մաքսային տարածքում այդպիսի վաճառք իրականացնող անձանց հետ (Համաձայնագրի 8-րդ հոդվածի 2-րդ կետ):

«Փոխկապակցված անձ» հասկացությունն օգտագործվում է Համաձայնագրի 3-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված իմաստով:

6. Այն հարցը լուծելիս, թե ինչպիսի ապրանքների վաճառքները պետք է դիտարկել ապրանքի միավորի գինը որոշելու համար (գնահատվող (ներմուծվող) կամ նույնական կամ համանման ապրանքներ), հաշվի է առնվում հետևյալը:

Գնահատվող (ներմուծվող) ապրանքների մաքսային արժեքի որոշման օրվա դրությամբ Մաքսային միության մաքսային տարածքում դրանց վաճառքների վերաբերյալ մաքսային արժեքի որոշման նպատակների համար ընդունելի տեղեկությունների առկայության դեպքում օգտագործվում են ապրանքի միավորի այն գնի ու գնահատվող (ներմուծվող) ապրանքների դիմաց տրված այն գումարների վերաբերյալ համապատասխան տեղեկությունները, որոնք Համաձայնագրի 8-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան ենթակա են հանման: Այս դեպքում չի պահանջվում դիտարկել նույնական կամ համանման ապրանքների վաճառքները:

Եթե գնահատվող (ներմուծվող) ապրանքների մաքսային արժեքի որոշման օրվա դրությամբ չկան Մաքսային միության մաքսային տարածքում դրանց վաճառքի վերաբերյալ տեղեկություններ, սակայն այնուհանդերձ առկա են նույնական կամ համանման ապրանքների վաճառքների վերաբերյալ տեղեկություններ, ապա օգտագործվում են այդ վաճառքների վերաբերյալ համապատասխան տեղեկությունները:

Այս դեպքում չի պահանջվում դիտարկել գնահատվող (ներմուծվող) ապրանքների հետագա վաճառքները:

Այսպիսով, գնահատվող (ներմուծվող) ապրանքների մաքսային արժեքը որոշելու համար որպես հիմք օգտագործվում է ապրանքի միավորի այն գինը, որով վաճառվում են գնահատվող (ներմուծվող) ապրանքները, կամ ապրանքի միավորի այն գինը, որով վաճառվում են ավելի վաղ ներմուծված գնահատվող (ներմուծվող) ապրանքների հետ նույնական կամ համանման ապրանքները:


Որպես կանոն, գնահատվող (ներմուծվող) ապրանքների մաքսային արժեքը որոշվում է հայտարարատուի (մաքսային ներկայացուցչի) կողմից ապրանքի միավորի այն գնի հիման վրա, որով գնահատվող (ներմուծվող) ապրանքները վաճառվում են Մաքսային միության մաքսային տարածքում, կամ ապրանքի միավորի այն գնի հիման վրա, որով հայտարարատուն վաճառել է ավելի վաղ ներմուծված գնահատվող (ներմուծվող) ապրանքների հետ նույնական կամ համանման ապրանքները, այսինքն՝ օգտագործվում են հայտարարատուի կողմից իրականացված նախորդ մատակարարումների վերաբերյալ տեղեկատվություն պարունակող փաստաթղթերը:

Տնտեսավարող այլ սուբյեկտների կողմից գնահատվող (ներմուծվող) ապրանքների հետ նույնական կամ համանման ավելի վաղ ներմուծված ապրանքների՝ Մաքսային միության մաքսային տարածքում վաճառքի վերաբերյալ փաստաթղթերը մեծամասամբ հասանելի չեն հայտարարատուին: Սակայն եթե հայտարարատուի տրամադրության տակ կան այդպիսի փաստաթղթեր, եւ դրանցում պարունակվող տեղեկատվությունը համապատասխանում է Համաձայնագրի 2-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներին, ապա գնահատվող (ներմուծվող) ապրանքների մաքսային արժեքը կարող է որոշվել 4-րդ մեթոդով՝ Համաձայնագրի 8-րդ հոդվածով սահմանված պահանջները կատարելու պայմանով:

7. Ապրանքների մաքսային արժեքը 4-րդ մեթոդով որոշելու նպատակով սույն Կանոնների 6-րդ կետում նշված պայմանները բավարարող վաճառքները դիտարկելիս հաշվի են առնվում ապրանքները Մաքսային միության մաքսային տարածք ներմուծելուց հետո Մաքսային միության մաքսային տարածքում

վաճառքի առաջին առետրային մակարդակի գնորդներին ապրանքների վաճառքները:

8. Առաջին առետրային մակարդակի վաճառքի գնորդներ են համարվում այն գնորդները, որոնք ապրանքները ձեռք են բերում այդ ապրանքները ներմուծող հանդիսացող վաճառողից (գծապատկեր 1):



Վաճառքը Մաքսային միության մաքսային տարածքում,
որտեղ՝

Ա՝ ապրանքներ վաճառող (արտահանող),

Ն՝ ապրանքների գնորդ (ներմուծող), որը Մաքսային միության մաքսային տարածքում հանդես է գալիս որպես ապրանքներ վաճառող,

Գ1՝ գնորդներ, որոնք Մաքսային միության մաքսային տարածքում ապրանքները ձեռք են բերում անմիջապես Ն-ից, այսինքն՝ վաճառքի առաջին առետրային մակարդակի գնորդներ,

Գ2՝ գնորդներ, որոնք Մաքսային միության մաքսային տարածքում ապրանքները ձեռք են բերում Գ1-ից, այսինքն՝ վաճառքի հաջորդ առևտրային մակարդակում:

Ընդ որում, Գ1-ը եւ Գ2-ը չպետք է լինեն փոխկապակցված անձինք:

9. Մաքսային միության մաքսային տարածքում վաճառված ապրանքի միավորի գինը որոշելու նպատակով չեն դիտարկվում դրանց վաճառքներն այն անձին, որը գնահատվող (ներմուծվող) ապրանքների՝ Մաքսային միության մաքսային տարածք արտահանման համար դրանց արտադրության եւ մատակարարման հետ կապված, ուղղակիորեն կամ անուղղակիորեն, անվճար կամ իջեցված գնով տրամադրում է օգտագործման համար հետեւյալ ապրանքներն ու ծառայությունները, որոնք նշված են Համաձայնագրի 5-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետում.

ա) հումք, նյութեր, դետալներ, կիսաֆաբրիկատներ եւ նման առարկաներ, որոնցից բաղկացած են գնահատվող (ներմուծվող) ապրանքները,

բ) գործիքներ, դրոշմակնիքներ, կաղապարներ եւ նմանատիպ այլ առարկաներ, որոնք օգտագործվել են գնահատվող (ներմուծվող) ապրանքների արտադրության ժամանակ,

գ) նյութեր, որոնք ծախսվել են գնահատվող (ներմուծվող) ապրանքների արտադրության ժամանակ,

դ) Մաքսային միության տարածքից դուրս կատարված եւ գնահատվող (ներմուծվող) ապրանքների արտադրության համար անհրաժեշտ նախագծում, մշակում, ինժեներական, կոնստրուկտորական աշխատանքներ, գեղարվեստական ձեւավորում, դիզայն, էսքիզներ եւ գծագրեր:

10. Ապրանքի միավորի այն գնի հաշվարկը, որով գնահատվող (ներմուծվող) կամ նույնական կամ համանման ապրանքները վաճառվում են համախառն ամենամեծ քանակով, կատարվում է հետեւյալ կերպ:

Ապրանքի միավորների համախառն ամենամեծ քանակը որոշելու նպատակով ընտրվում են Մաքսային միության մաքսային տարածքում վաճառքի առաջին առետրային մակարդակի գնորդներին գնահատվող (ներմուծվող) կամ նույնական կամ համանման ապրանքների վաճառքները, եւ հաշվարկվում են ապրանքի միավորի համար միեւնույն գնով վաճառված ապրանքների ընդհանուր քանակը:

Եթե ապրանքի միավորի համար տարբեր գներով վաճառվել են միեւնույն քանակի ապրանքներ, ապա մաքսային արժեքը որոշելու համար որպես հիմք է ընդունվում ապրանքի միավորի համար ամենացածր գինը:

Օրինակ՝ 2 000 միավոր ապրանքից բաղկացած խմբաքանակից 1 000 միավոր ապրանքը վաճառվել է 75 դրամական միավոր գնով, իսկ մյուս 1 000 միավորը՝ 70 դրամական միավոր գնով: Գնահատվող (ներմուծվող) ապրանքների մաքսային արժեքը որոշելու նպատակով օգտագործվում է այն գինը, որը հավասար է 70 դրամական միավորի:

11. Ապրանքի միավորի համախառն ամենամեծ քանակը որոշելու կոնկրետ տարբերակը կախված է վաճառողի կողմից կիրառվող վաճառվող ապրանքների գնագոյացման եւ վաճառքի կազմակերպման սխեմաներից:

Մասնավորապես, ելնելով միեւնույն գնով վաճառված ապրանքի միավորի համախառն ամենամեծ քանակից՝ կարող են օգտագործվել ապրանքի միավորի գնի հաշվարկման հետեւյալ տարբերակները:

Օրինակ 1. Մաքսային միության մաքսային տարածքում ապրանքները վաճառվում են ըստ կատարողի (գնացուցակի, արժեցուցակի), որով ապրանքի միավորի համար նախատեսվում են ավելի շահավետ գներ մեծ քանակությամբ կատարվող գնումների դեպքում:

Վաճառված ապրանքի	Ապրանքի միավորի	Վաճառքների քանակը	Նույն գնով վաճառված ապրանքի միավորների
------------------	-----------------	-------------------	--

միավորների քանակը	համար գինը (դրամական միավոր)		ընդհանուր քանակը
1-ից 10	100	10 վաճառք՝ 5-ական ապրանքի միավոր, 5 վաճառք՝ 3-ական ապրանքի միավոր,	65
11-ից 25	95	5 վաճառք՝ 11-ական ապրանքի միավոր	55
25-ից ավելի	90	1 վաճառք՝ 30-ական ապրանքի միավոր, 1 վաճառք՝ 50-ական ապրանքի միավոր	80

Նույն գնով վաճառված ապրանքի միավորների ամենամեծ քանակը կազմում է 80 միավոր (30 միավոր + 50 միավոր): Այսպիսով, ապրանքի միավորի գինը, որով ապրանքները վաճառվում են համախառն ամենամեծ քանակով, կազմում է 90 դրամական միավոր:

Օրինակ 2. Առկա է վաճառքի երկու դեպքի վերաբերյալ տեղեկատվություն. առաջին դեպքում 500 ապրանքի միավոր վաճառվել է 95 դրամական միավոր գնով, իսկ երկրորդ դեպքում 400 ապրանքի միավոր՝ 90 դրամական միավոր գնով: Նույն գնով վաճառված ապրանքի միավորների ամենամեծ քանակ հավասար է 500-ի: Այսպիսով, ապրանքի միավորի գինը, որով ապրանքները վաճառվում են համախառն ամենամեծ քանակով, կազմում է 95 դրամական միավոր:

Օրինակ 3. Տարբեր քանակությամբ ապրանք վաճառվել է տարբեր գներով:

Վաճառված ապրանքի միավորների քանակը	Գինը՝ ապրանքի միավորի համար (դրամական միավոր)
40	100
50	90
15	100
30	95
25	105
35	95

Նույն գնով վաճառված ապրանքի միավորների ընդհանուր քանակը որոշվում է հետևյալ կերպ.

Նույն գնով վաճառված ապրանքի միավորների գումարային քանակը	Գինը՝ ապրանքի միավորի համար (դրամական միավոր)
50	90
65 (30 + 35)	95
60 (40 + 15 + 5)	100
25	105

Այս դեպքում նույն գնով վաճառված ապրանքի միավորների համախառն ամենամեծ քանակը կազմում է 65 միավոր: Այսպիսով, ապրանքի միավորի գինը, որով ապրանքները վաճառվում են համախառն ամենամեծ քանակով, կազմում է 95 դրամական միավոր:

12. Ապրանքի միավորի գնի հաշվարկն իրականացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել գնահատվող (ներմուծվող) կամ նույնական կամ համանման ապրանքների վաճառքն այն քանակով, որը բավարար է համապատասխան ապրանքի միավորի գինը սահմանելու համար:

Ապրանքի միավորների վաճառված քանակի բավարար լինելու մասին որոշումը պետք է կայացվի յուրաքանչյուր կոնկրետ դեպքի համար անհատապես:

Այսպես, եթե գնահատվող (ներմուծվող) ապրանքները վաճառվել են մեկ գնորդի, ապա այդ վաճառքը կարող է դիտարկվել որպես ապրանքի միավորի գինը սահմանելու համար բավարար քանակով վաճառք:

Թանկարժեք ապրանքների (խոշոր ծավալաչափի սարքավորումներ, տուրբիններ եւ այլ) վաճառքի դեպքում որպես բավարար քանակ կարող է ընդունվել 1-2 միավոր քանակով վաճառքը այն դեպքում, երբ փոքր պահեստամասերի համար, որոնք սովորաբար վաճառվում են մեծ քանակով

(օրինակ՝ 10 000 միավորներով), 100–200 միավոր քանակով հատով վաճառքը բավարար չի լինի ապրանքի միավորի ընդունելի գնի ընտրության համար:

13. Ապրանքի միավորի՝ ապրանքի համախառն ամենամեծ քանակով վաճառվող գինը որոշելու համար ընդունելի վաճառքների ընտրության ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալը՝

ա) դիտարկվում են Մաքսային միության մաքսային տարածքում ապրանքների վաճառքները վաճառքի առաջին առետրային մակարդակի գնորդներին.

բ) դիտարկվում են ապրանքների վաճառքներն այն անձանց, որոնք փոխկապակցված չեն Մաքսային միության մաքսային տարածքում վաճառք իրականացնող անձանց հետ.

գ) չեն դիտարկվում ապրանքների վաճառքներն այն անձանց, որոնք նշված են սույն կանոնների 9–րդ կետում.

դ) դիտարկվում են ապրանքների վաճառքներն այն քանակով, որը բավարար է ապրանքի միավորի գինը սահմանելու համար:

14. Ապրանքների մաքսային արժեքը 4–րդ մեթոդով որոշելու նպատակների համար ընդունելի վաճառքներն ընտրելիս անհրաժեշտ է հաշվի առնել այն ժամանակահատվածը, որի ընթացքում իրականացվում են այդ վաճառքները:

Համաձայնագրի 8–րդ հոդվածի 2–րդ կետով չի սահմանվում Մաքսային միության մաքսային տարածքում գնահատվող (ներմուծվող) կամ նույնական կամ համանման ապրանքների վաճառքի իրականացման ստույգ ժամանակահատվածը, այլ այն սահմանվում է որպես «միեւնույն կամ դրան համապատասխան ժամանակահատված», որի ընթացքում գնահատվող (ներմուծվող) ապրանքները հատել են Մաքսային միության մաքսային սահմանը:

Գնահատվող (ներմուծվող) ապրանքների մաքսային արժեքը 4–րդ մեթոդով որոշելու նպատակով անհրաժեշտ է որպես «միեւնույն կամ դրան


համապատասխան ժամանակահատված» դիտարկել այն ժամանակահատվածը, որն ընդգրկում է գնահատվող (ներմուծվող) ապրանքների՝ Մաքսային միության մաքսային տարածք ժամանման ամսաթիվը, Մաքսային միության մաքսային տարածք գնահատվող (ներմուծվող) ապրանքների ժամանման ամսաթվից որոշակի ժամանակահատված առաջ եւ որոշակի ժամանակահատված հետո:

Այսպես՝ որպես «միեւնույն կամ դրան համապատասխան ժամանակահատված» կարող է դիտարկվել այն ժամանակահատվածը, որն ընդգրկում է գնահատվող (ներմուծվող) ապրանքների՝ Մաքսային միության մաքսային տարածք ժամանման ամսաթիվը եւ, օրինակ, գնահատվող (ներմուծվող) ապրանքների՝ Մաքսային միության մաքսային տարածք ժամանման ամսաթվից 10–15 օր առաջ եւ 10–15 օր հետո ընկած ժամանակահատվածը:

Եթե «միեւնույն կամ դրան համապատասխան ժամանակահատվածում» չեն բացահայտվում ապրանքների մաքսային արժեքը 4–րդ մեթոդով որոշելու նպատակների համար ընդունելի վաճառքները, ապա Համաձայնագրի 8–րդ հոդվածի 3–րդ կետին համապատասխան դիտարկվում են գնահատվող (ներմուծվող) կամ նույնական կամ համանման ապրանքների վաճառքը միեւնույն վիճակում, ինչ վիճակում դրանք ներմուծվել են, գնահատվող (ներմուծվող) ապրանքների՝ Մաքսային միության մաքսային տարածք ժամանելու ամսաթվին ամենամոտ օրվա դրությամբ, սակայն ոչ ուշ, քան այդ ամսաթվից 90 օրացուցային օրը լրանալուց հետո (գծապատկեր 2):

Արտահանման
երկրներից
ապրանքների
արտահանում

Ապրանքների ներմուծում
Մաքսային միության
մաքսային տարածք



B՝ գնահատվող (ներմուծվող) ապրանքների՝ Մաքսային միության մաքսային տարածք ժամանման ամսաթիվը,

B1-B2՝ «միեւնույն կամ դրան համապատասխան ժամանակահատված», որն ընդգրկում է գնահատվող (ներմուծվող) ապրանքների՝ Մաքսային միության մաքսային տարածք ժամանման ամսաթիվը եւ այս օրինակում կազմում է գնահատվող (ներմուծվող) ապրանքների՝ Մաքսային միության մաքսային տարածք ժամանման ամսաթվից առաջ 10–15 օր եւ ժամանման ամսաթվից հետո 10–15 օր:

C՝ գնահատվող (ներմուծվող) ապրանքների՝ Մաքսային միության մաքսային տարածք ժամանման ամսաթվից հետո 90-րդ օրացուցային օրը:

Այսպիսով, գնահատվող (ներմուծվող) ապրանքների մաքսային արժեքը 4-րդ մեթոդով որոշելիս նախ եւ առաջ բացահայտվում են B1-ի եւ B2-ի միջեւ ընկած ժամանակահատվածում տեղի ունեցած վաճառքները: Եթե այդպիսի վաճառքներ չեն հայտնաբերվում, ապա այլ հավասար պայմաններում դիտարկվում են B2-ի եւ C-ի միջեւ ընկած ժամանակահատվածում տեղի ունեցած վաճառքները, ընդ որում, նախապատվությունը տրվում է այն վաճառքներին, որոնք իրականացվել են B2-ին ամենամոտ ժամանակահատվածում:

Համադրելի գործարքների օբյեկտիվ ընտրությունն ապահովվելու եւ գների կոռեկտ համեմատության համար նպատակահարմար է հաշվի առնել այն ժամանակահատվածը, որի ընթացքում այդպիսի ապրանքների շուկայի կոնյուկտուրան համեմատաբար կայուն է եղել: Սա կապված է այն հանգամանքի հետ, որ որոշ ապրանքների արժեքը բավականին տեսական ժամանակահատվածում էական տատանումների չի ենթարկվում (մեքենաներ, բարդ մեխանիզմներ, տուրքիներ եւ այլն), իսկ մյուս ապրանքների արժեքը փոփոխվում է յուրաքանչյուր ամիս կամ ավելի հաճախ (մրգեր, բանջարեղեն, ծաղիկներ, սեզոնային հագուստ, կոշիկ եւ այլն):

Համաձայնագրի 8-րդ հոդվածով սահմանված ժամանակահատվածի (90 օրացուցային օր) սահմաններում ընդունելի վաճառքներն ընտրելիս անհրաժեշտ է հաշվի առնել գործարքի հանգամանքները, ապրանքների առանձնահատկությունը, սեզոնը, որի ընթացքում ներմուծվում են ապրանքները, եւ նման այլ գործոններ: Մասնավորապես, սեզոնային ապրանքների համար ընդունելի վաճառքների ընտրության ժամանակահատվածն ավելի կարճ կլինի, քան այն ապրանքների համար, որոնց արտադրությունը եւ օգտագործումը կախված չէ կոնկրետ սեզոնից (կախված չէ տարվա եղանակից):

15. Համաձայնագրի 8-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթների համաձայն՝ ապրանքի միավորի հաշվարկային (ընտրված) գնից պետք է հանել հետեւյալ գումարները.

ա) միջնորդին (գործակալին) սովորաբար վճարվող կամ վճարման ենթակա վարձատրությունը կամ գնին ավելացումը, որը սովորաբար կատարվում է շահույթ ստանալու եւ ընդհանուր ծախսերը (առետրային եւ կառավարման ծախսեր) ծածկելու համար, այն չափով, որքանով դրանք սովորաբար կատարվում են Մաքսային միության մաքսային տարածքում միեւնույն դասի կամ տեսակի այն ապրանքների վաճառքի հետ կապված, որոնք ներմուծվել են այն նույն երկրից, որտեղից եւ գնահատվող (ներմուծվող) ապրանքները, ինչպես նաեւ այլ երկրներից,

բ) Մաքսային միության մաքսային տարածքում ապրանքների տեղափոխման (փոխադրման) եւ ապահովագրության սովորական ծախսերն ու այդպիսի գործառնությունների հետ կապված այլ ծախսեր,

գ) մաքսատուրքերը, հարկերը, հավաքագրումները եւ Մաքսային միության անդամ պետության օրենսդրության համապատասխան կիրառվող այլ հարկեր, որոնք ենթակա են վճարման՝ Մաքսային միության տվյալ անդամ պետության տարածքում ապրանքների ներմուծման եւ (կամ) վաճառքի հետ կապված, ներառյալ Մաքսային միության տվյալ անդամ պետության սուբյեկտների հարկերն ու տուրքերը եւ տեղական հարկերն ու տուրքերը:

16. Միջնորդին (գործակալին) սովորաբար վճարվող կամ վճարման ենթակա վարձատրության գումարների կամ շահույթ ստանալու եւ ընդհանուր ծախսերը (առետրային եւ կառավարման ծախսեր) ծածկելու համար սովորաբար կատարվող գնին ավելացման գումարների հանման առնչությամբ անհրաժեշտ է հաշվի առնել հետեւյալը՝

ա) Մաքսային միության մաքսային տարածքում վաճառքի կազմակերպումից կախված՝ կարող է կատարվել հանումների տեսակներից միայն մեկը կամ միջնորդին (գործակալին) տրվող վարձատրության գումարի հանում այն դեպքում, երբ ապրանքների վաճառքն իրականացվում է միջնորդի (գործակալի) մասնակցությամբ, կամ գնին ավելացման գումարի հանում այն դեպքում, երբ

ապրանքների վաճառքն իրականացվում է առանց միջնորդի (գործակալի) մասնակցության: Հանումների նշված տեսակները միաժամանակ չեն կարող կատարվել.

բ) շահույթ ստանալու եւ ընդհանուր ծախսերը (առետրային եւ կառավարման ծախսեր) ծածկելու համար սովորաբար կատարվող գնին ավելացում ասելով պետք է հասկանալ ավելացում այն չափով, որքանով այն սովորաբար կատարվում է Մաքսային միության մաքսային տարածքում միեւնույն դասի կամ տեսակի այն ապրանքների վաճառքի հետ կապված, որոնք ներմուծվել են այն նույն երկրից, որտեղից եւ գնահատվող (ներմուծվող) ապրանքները, ինչպես նաեւ այլ երկրներից.

գ) շահույթի եւ ընդհանուր ծախսերի գումարը (առետրային եւ կառավարման ծախսեր) որոշվում է հայտարարատուի (մաքսային ներկայացուցչի) ունեցած տեղեկատվության հիման վրա, եթե նրա կողմից տրամադրված տվյալները համադրելի են Մաքսային միության անդամ պետությունում նույն դասի կամ տեսակի ապրանքների վաճառքների ժամանակ առկա նույնանման տվյալների հետ (Համաձայնագրի 8-րդ հոդվածի 7-րդ կետ): Նշված տեղեկությունները պետք է համապատասխանեն Համաձայնագրի 2-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներին, այսինքն՝ հիմնվեն հավաստի, քանակապես որոշելի եւ փաստաթղթային հաստատում ունեցող տեղեկատվության վրա: Եթե մաքսային մարմինն ունի հավաստի, քանակապես որոշելի եւ փաստաթղթային հաստատում ունեցող տեղեկատվություն շահույթի ու ընդհանուր ծախսերի (առետրային եւ կառավարման ծախսերի) սովորական չափի, այսինքն՝ ավելացման այն չափի վերաբերյալ, որը կոնկրետ ժամանակահատվածում ավելի հաճախ է հանդիպում համապատասխան ապրանքային շուկայում, իսկ հայտարարատուի (մաքսային ներկայացուցչի) կողմից օգտագործված տեղեկությունները համադրելի չեն մաքսային մարմնի տրամադրության տակ եղած տեղեկատվության հետ, ապա Մաքսային մարմինը շահույթի եւ ընդհանուր ծախսերի (առետրային եւ

կառավարման ծախսերի) գումարը որոշում է իր ունեցած տեղեկությունների հիման վրա:

17. Մաքսային միության մաքսային տարածքում կատարված տեղափոխման (փոխադրման) եւ ապահովագրության սովորական ծախսերը, ինչպես նաեւ այդպիսի գործառնությունների հետ կապված այլ ծախսերը ենթակա են հանման, եթե դրանք չեն ընդգրկվել ընդհանուր ծախսերը (առեւտրային եւ կառավարման ծախսերը) ծածկելու համար սովորաբար կատարվող գնին ավելացման կազմում:

Սովորական ծախսեր ասելով պետք է հասկանալ այն ծախսերը, որոնք հիմնվում են տեղափոխմանը (փոխադրմանը) եւ ապահովագրությանը ավելի բնորոշ (ներկայացուցչական) գների (սակագների) վրա, որոնք օգտագործվում (առաջարկվում) են գործակալների հիմնական մասի կողմից համապատասխան ծառայությունների ազատ մրցակցային շուկայում: Ընդ որում, հաշվի են առնվում օպտիմալ (սովորաբար օգտագործվող) երթուղով իրականացրած տեղափոխումները (փոխադրումները) եւ ապահովագրության ստանդարտ (ապահովագրության տվյալ տեսակին բնորոշ, դրա համար ընդունված) պայմանները:

18. Մաքսային տուրքերի, հարկերի, հավաքագրումների, հատուկ, հակագնագցման կամ փոխհատուցման տուրքերի, ինչպես նաեւ Մաքսային միության համապատասխան անդամ պետության օրենսդրությամբ սահմանված Մաքսային միության այդ անդամ պետության տարածք ապրանքների ներմուծման եւ (կամ) վաճառքի հետ կապված վճարման ենթակա այլ հարկերի հանումը, այդ թվում՝ Մաքսային միության համապատասխան անդամ պետության սուբյեկտների հարկերն ու հավաքագրումները եւ տեղական հարկերն ու հավաքագրումները կատարվում են հանման համար հայտարկված գումարների չափերի փաստաթղթային հաստատման եւ հիմնավորման առկայության դեպքում:

19. Այն դեպքում, երբ ո՛չ գնահատվող (ներմուծվող), ո՛չ նույնական, ո՛չ համանման ապրանքները չեն վաճառվում Մաքսային միության մաքսային

տարածքում միեւնույն վիճակում, ինչ վիճակում դրանք ներմուծվել են Մաքսային միության մաքսային տարածք, ապա Համաձայնագրի 8-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան՝ հայտարարատուի (մաքսային ներկայացուցչի) դիմումի հիման վրա գնահատվող (ներմուծվող) ապրանքների մաքսային արժեքը որոշվում է այդպիսի ապրանքների միավորի այն գնով, որով վերամշակումից (մշակումից) հետո դրանք վաճառվում են համախառն ամենամեծ քանակով Մաքսային միության մաքսային տարածքում՝ վերամշակման (մշակման) արդյունքում ավելացված արժեքը եւ Համաձայնագրի 8-րդ հոդվածի 2-րդ կետում նշված գումարները գնից հանելու պայմանով: Ընդ որում՝

ա) հայտարարատուի (մաքսային ներկայացուցչի) կողմից դիմումի հետ մեկտեղ ներկայացված է գնահատվող (ներմուծվող) ապրանքների մաքսային արժեքի հաշվարկը՝ ելնելով ապրանքի միավորի այն գնից, որով այդ ապրանքների համախառն ամենամեծ քանակը վաճառվում է դրանց վերամշակումից (մշակումից) հետո,

բ) հայտարարատուի (մաքսային ներկայացուցչի) կողմից ներկայացված են վերամշակման (մշակման) արժեքի վերաբերյալ տեղեկություններ, ինչպես նաեւ գնահատող (ներմուծվող) ապրանքների մաքսային արժեքը 4-րդ մեթոդով որոշելու համար անհրաժեշտ այլ տեղեկություններ,

գ) հայտարարատուի (մաքսային ներկայացուցչի) կողմից ներկայացված վերամշակման (մշակման) արժեքի վերաբերյալ տեղեկությունները հիմնված են հավաստի, քանակապես որոշելի եւ փաստաթղթային հաստատում ունեցող տեղեկատվության վրա: Քանակապես որոշելի տեղեկությունների վրա հիմնված տեղեկություններ են համարվում այն տեղեկությունները, որոնք պարունակում են տվյալներ՝ գնահատվող (ներմուծվող) ապրանքների վերամշակման (մշակման) համար կատարված ծախսումների կազմի եւ չափերի մասին:

20. Համաձայնագրի 8-րդ հոդվածի 5-րդ կետին համապատասխան՝ Մաքսային միության մաքսային տարածքում վաճառքի գնի մաքսային արժեքը

որոշելու նպատակով վերամշակված (մշակված) գնահատվող (ներմուծված) ապրանքների օգտագործումը չի թույլատրվում հետեւյալ դեպքերում՝

ա) հետագա վերամշակման (մշակման) արդյունքում գնահատվող (ներմուծված) ապրանքները կորցնում են իրենց անհատական հատկանիշները՝ բացառությամբ այն դեպքերի, երբ, չնայած իրենց անհատական հատկանիշների կորստին, վերամշակման (մշակման) արդյունքում ավելացված արժեքի մեծությունը կարող է ճշգրտորեն որոշվել:

Օրինակ 1. Մաքսային միության մաքսային փարածք ներմուծվել է բամբակ, որը նախատեսված չէ մաքուր վիճակում վաճառքի համար: Մաքսային միության մաքսային փարածքում նրա հետագա մշակման արդյունքում ստացվում է փարբեր սինթետիկ հավելումներ պարունակող խառնուրդային գործվածք, որն այնուհետեւ վաճառվում է Մաքսային միության մաքսային փարածքում: Այսպիսով, ներմուծված ապրանքը (բամբակը) վերամշակման բավականին բարդ գործողությունների արդյունքում կորցնում է իր անհատական հատկանիշները:

Այլ դեպքում, չնայած ապրանքների անհատական հատկանիշների կորստի, վերամշակման (մշակման) արդյունքում ավելացված արժեքի մեծությունը կարող է բավականին ճշգրտորեն որոշվել:

Օրինակ 2. Մաքսային միության մաքսային փարածք է ներմուծվում 160 փոննա շաքար: Մաքսային միության մաքսային փարածքում հետագա վերամշակումից (մշակումից) հետո այն վերածվում է օշարակի (200 փոննա), որը նախատեսված է Մաքսային միության մաքսային փարածքում վաճառքի համար: Պարզ գործողությունների (ջրի եւ ոչ մեծ քանակությամբ կիրորոնաթթվի ավելացում) իրականացման արդյունքում ստացված օշարակի բաղադրության մեջ այլեւս անհնար է առանձնացնել շաքարը այն նույն վիճակում, ինչ վիճակում այն ներմուծվել է, այսինքն՝ շաքարը կորցնում է իր անհատական հատկանիշները: Սակայն օշարակի, շաքարի, լուծիչի արժեքի եւ աշխատանքի վարձատրության համար կատարված ծախսումների վերաբերյալ տվյալների առկայության դեպքում

կարելի է հաշվել շաքարի վերամշակման (մշակման) արդյունքում ավելացված արժեքի մեծությունը.

բ) վերամշակումից (մշակումից) հետո գնահատվող (ներմուծվող) ապրանքները չեն կորցնում իրենց անհատական հատկանիշները, սակայն Մաքսային միության մաքսային տարածքում վաճառվող ապրանքների այնքան չնչին մաս են կազմում, որ գնահատվող (ներմուծվող) ապրանքների արժեքն էապես չի ազդում վաճառվող ապրանքների արժեքի վրա:

Օրինակ 3. 1 000 դրամական միավոր գնով ներմուծվում են օդային զփիչներ, որոնք օգտագործվում են Մաքսային միության մաքսային տարածքում 250 000 դրամական միավոր գնով վաճառվող ավտոմոբիլների արտադրության համար: Այս դեպքում օդային զփիչի արժեքը կազմում է պատրաստի արտադրանքի արժեքի չնչին մասը, այսինքն՝ նրա արժեքն էական ազդեցություն չի գործում վաճառվող ավտոմոբիլների արժեքի վրա:

21. 4-րդ մեթոդը կիրառելու դեպքում, ինչպես բխում է սույն կանոնների 14-րդ, 19-րդ եւ 20-րդ կետերից, նախատեսված յուրաքանչյուր կոնկրետ իրավիճակի համար անհրաժեշտ է անհատական մոտեցում եւ վերլուծություն՝ տվյալ մեթոդով մաքսային արժեքը որոշելու համար անհրաժեշտ տեղեկությունները փնտրելու եւ օգտագործելու նպատակով կատարված այս կամ այն ծախսումների ոչ միայն հնարավորությունը, այլեւ նպատակահարմարությունը որոշելու համար: